

և որ տեղով նորա բարձրացոյց զսա: Փա՛ռք կամեցողին բարեաց, զի յախտալից տղմուտ հողոյս յանբարի գօսացեալ ծառոյս, որ յարկածից թշնամոյն հրաշագործն իւր արժանիս՝ վարդ մի վայելչագեղ գոյացոյց եւ առնկալաւ զնա ի տեղի անկելոցն եւ պապանձեցոյց զմեծաբանութիւն թշնամոյն բարեաց, որ միշտ զմեզ ամբաստանէ: Զուարթացաւ նա ընդ հրեշտակս փառաբան լինիլ իւր յօրինողին՝ փոխանակ ծուլութեան եւ պարտուց մերոց եւ վասն մեր միջնորդէ: Եւ զի Իւսուֆի սանի կոչէի զնա նախագուշակ ածական անուամբս, այսինքն Գեղեցկին Յովսէփայ բաղդատեալ, այսօր պակասիլն ի մէնջ եւ յեղբարց, եւ յուսամ առնել բարի իւրոց ծնողաց ընդ թագաւորելոյն Քրիստոսի թագաւորութեամբն իւրով յաշխարհն լուսազգեաց յամենագօր թագաւորութիւն յերկնաւոր: Զի դասաւորեցաւ ընդ մանկանցն Բեթլեհէմի, որ ի մահ Տեառն մկրտեալ՝ ախտիւքն յակամայիւք քարչիւր ի մէնջ կարօտեալ, զի ընդ լուսեղէնսն զուարթացի պարերգութեամբ խնդութեան: Պարաւորեցաւ որպէս զերամս աղաւնեաց ընդ մանկանցն Եբրայեցոց, որք յանուն Տեառն զեկեալ նոր թագաւորն Քրիստոս փառաբանէին ուսաննայիւք դաւանեալ: Արդ եւ սա ի փառաբանել կցորդի ասելով իւր զարդարողին թէ Օրհնեալ են փառքն Տեառն ի տեղով իւրում, զոր ցուցեր ինձ առ ի հաճոյս քեզ օրհնաբանութեան: Որ օրհնի միշտ եւ օրհնեալ է անբաւ իւրով նախասահմանութեամբ, որպէս եւ կամեցեալ է եւ կամի եւ կամելոց է գործ կատարելագոյն, նա տացէ մեզ շնորհս խորհել միշտ զհաճոյս իւր առ ի հնազանդութիւն ամէնօրհնեալ կամաց նորա, արժանի առնել զմեզ հասանել վիճակի մասին սրբոցն ի լոյս: